ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 151

ք. Երևան **10.12.2018 թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 02/14.2/8101-18, ՀՀ բնապահպանության 1/02.2/12474-18, ՀՀ գյուղատնտեսության ԳՊ/ԱԲ-1/8574-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 02ՏԱ/22.1ՀԲ/7359-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 03/16.3/9305-18, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 05/14.1/18171-18 նախարարությունների, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/5728-18, Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ԱՊ/6558-18 և ՀՀ ԷԵ և ԲՊ նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 01/08/4118-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի** մարզի **Սիսիան** համայնքի **Դարբաս** բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նպատակային նշանակության **0.12** հա /կադաստրային ծածկագիր՝ **09-031-0030-0016-ից**/ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողեր փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, «կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր» գործառնական նշանակության՝ օրվա կարգավորիչ ջրամբարի և օժանդակ կառույցների շինարարության համար:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ռ. Մինասյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է Գերմանական KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացնել <<Համայնքային ենթակառուցվածքներ ծրագիր (ՀԵԾ) II Փուլ 3>> ծրագրի շրջանակներում <<SAFEGE SAS-ՋԻՆՋ ՍՊԸ>> և SRP Schneider & Partner Lnginer Consult GmbH խորհրդատվական կազմակերպությունների կողմից պետք է կատարվի ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս բնակավայրում օրվա կարգավորման ջրամբարների (ՕԿՋ) կառուցապատման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրվա կարգավորման ջրամբարի կառուցման համար աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Դարբաս բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման՝ 0.1200հա (կադաստրային ծածկագիր՝ 09-031-00030) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր գործառնական նշանակությամբ:

Քաղաքաշինության և տնտեսության

ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. Հովհաննիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Դարբաս բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման՝ 0.1200հա (կադաստրային ծածկագիր՝ 09-031-00030) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր գործառնական նշանակությամբ փոխադրելուն հավանություն տալու մասին Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Սիսիանի համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Քաղաքաշինության և տնտեսության

ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. Հովհաննիսյան